

Նիստի նախագահ՝

Գաբրիել Ղազարյան

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

Խորհրդի անդամներ՝

Հարություն Յավրյան

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե

Արսեն Գաբրիելյան

ՀՀ բազկամարտի ֆեդերացիա

Գևորգ Սիմոնյան

«Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ

Յուրի Ալեքսանյան

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե

Գոհար Նալբանդյան

«Մեդիամաքս» լրատվական գործակալություն

Արշամ Սարգսյան

«Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ

Խաչիկ Հարությունյան

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի «ՖԻՄԱ» ՀԿ

Գոհար Նավասարդյան

Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» ՀԿ

Օրակարգ

1. Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտեին տարբեր մարզաձևերի մարզիչների 10 հաստիքների տրամադրման վերաբերյալ:
2. ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 27-ի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2010 թվականի օգոստոսի 25-ի «Պարտադիր զինվորական ծառայության ենթակա բարձրակարգ մարզիկների զորակոչը կազմակերպելու և ծառայության ընթացքում մարզումներին ու մրցումներին նրանց մասնակցությունն ապահովելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի նախագահի 2004 թվականի ապրիլի 21-ի N° 345/03/79 համատեղ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» համապատասխանաբար N° 1080-Ա և N° 85-Ա/1 համատեղ հրամանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Օրակարգի 1-ին հարցի քննարկում

Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» հասարակական կազմակերպության անդամ Գոհար Նավասարդյանը խոսել է հաշմանդամության ունեցող մարզիկների մարզումները կազմակերպելու նպատակով 10 մարզիչների հաստիքներ տրամադրելու անհրաժեշտության մասին:

Ելույթ ունեցան՝ Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը, «Մեդիամաքս» լրատվական գործակալության լրագրող Գոհար Նալբանդյանը:

Որոշվեց՝ առաջարկել Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» հասարակական կազմակերպությանը ներկայացնել 10 մարզիչների հաստիքները տրամադրելու անհրաժեշտությունը հիմնավորող առաջարկությունների փաթեթ:


Օրակարգի 2-րդ հարցի քննարկում

Պարտադիր զինվորական ծառայության ենթակա բարձրակարգ մարզիկների զորակոչը կազմակերպելու և ծառայության ընթացքում մարզումներին ու մրցումներին նրանց մասնակցությունն ապահովելու մասին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի և ՀՀ պաշտպանության նախարարների համատեղ հրամանների վերաբերյալ իր նկատառումներն է ներկայացրել «Սյունիքի մարզի աթլետիկայի ֆեդերացիա» ՀԿ-ի գործադիր տնօրեն Արշամ Սարգսյանը:

Ելույթ ունեցան՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գաբրիել Ղազարյանը, Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի արարողակարգի բաժնի պետ Հարություն Յավրյանը, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի «ՖԻՄԱ» ՀԿ-ի նախագահ Խաչիկ Հարությունյանը:

Որոշվեց՝ մշակել բարձրակարգ մարզիկների մարզական գործընթացն ապահովելու վերաբերյալ համապատասխան իրավական փաստաթղթի նախագիծ՝ այդ նպատակով սերտորեն համագործակցելով ՀՀ պաշտպանության նախարարության հետ:

Հասարակական խորհրդի նիստի նախագահ՝



Գ. Ղազարյան